ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

(IX—XIV դարեր)

Պատմ. գիտ. դոկտոր ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրավոր աղբյուրները վկայում են, որ Հայաստանում շինարարական աշխատանքները լայն ծավալ են ստացել հատկապես պետական անկախության և քաղաքական կայունության պայմաններում, իսկ դրանց բացակայության ժամանակ՝ երկրի բնիկ տերերի նուրբ և հեռատես դիվանագիտության շնորհիվ։

Բագրատունյաց թագավորության նախընթաց և հետընթաց տարիներին հայոց երկիրը դարձյալ թևակոխեց վերելքի և զարգացման ճանապարհը. հիմնադրվեցին բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, վերանորոգվեցին խոնարհված գմբեթները, կառուցվեցին ամրոց-դղյակները, ճանապարհներն ու կամուրջները, հյուրատներն ու իջևանատները, անցկացվեցին նորանոր ջրանցքներ ու առուներ։ Վանքերին կից գոյացան մարդասիրական հաստատություններ՝ անկելանոցներ, բորոտանոցներ, ուրկանոցներ, որոնց կարիքները հոգում էին վանական միաբանություններն իրենց հասութաբեր հաստատություններից ստացված եկամուտներով և նվիրատվություններով։ Այս ամենի մասին ստույգ վկայություններ են պահպանվել արքայական և իշխանական հրամանագրերում, կալվածագրերում, «պայման-վճիռներում» և հատկապես վիմական արձանագրություններում։

Մինչև բուն խնդրին անցնելը նշենք, որ այն տարածքներում, որտեղ կային կործանված սրբավայրեր, նորերը չէին կառուցվում, այլ վերականգնվում էին հները։ Այս կապակցությամբ Մխիթար Գոշն իր Դատաստանագրքի «Յաղագս դատաստանաց հակառակ եկեղեցի շինողաց» ՄԻԸ (228) հոդվածում[1] նշում է. «...որք զհարանցն մերոց դրեալ կարգն խափանէ եւ հակառակ եկեղեցի շինէ յեպիսկոպոսաց կամ յերիցանց, նզովեսցին ի մահ եւ ի կենսս եւ յամենայն քահանայական կարգէն լուծցին. եւ այլք, որք նոցին կամակից եղեն զնոյն պատիժս կրեսցեն»[2]։

Պաշտամունքային օջախներ կառուցելիս հաշվի էին առնվում տեղանքի հարմարավետությունը, պաշտպանվածությունը, բնության և սրբավայրի տեղագիտական ներդաշնակությունը։

IX—XIV դդ. Հայաստանը, ընդ որում նաև Սյունյաց լեռնաշխարհը, վերածվեց շինարարական լայն հրապարակի։ Իբրև կազմակերպիչներ և նյութատավորողներ հանդես եկան նահանգների ու գավառների աշխարհիկ և հոգևոր տերերը[3]։ Ինչպես հայտնի է, Սյունիքի հոգևոր կենտրոնը մինչև 839 թ. Ծղուկ գավառի (այժմյան Սիսիանի ենթամարզ) Շաղատ գյուղաքաղաքն էր, որտեղից տեղափոխվեց Տաթև։ Նոր եպիսկոպոսարանում սկսվում են լայն շի-

---

** Զեկուցում՝ կարդացված Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցու օծման առիթով Վայոց ձորում կազմակերպված գիտաժողովում, 1999 թ. ապրիլի 16-ին։*

1 Մխիթար Գոշի այս դրույթը վերցված է Դավիթ Ալավկա որդու ԿԱ (61) կանոնից (տե՛ս Դավիթ Ալավկա որդու կանոնները.—«Էջմիածին», 1953)։

2 Մ խ ի թ ա ր Գ ո շ. Գիրք դատաստանի. աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի. Երևան, 1975, էջ 140—141։

3 Դիվան հայ վիմագրության. պրակ 3, Երևան, 1967, էջ 240։

նարարական աշխատանքները. Դավիթ Բ եպիսկոպոսը (854—861) Վասակ Սյունյաց իշխանի որդի Փիլիպեին վճարելով 10000 դրամ, սեփականում է Տաթև գյուղն ու նրա մերձակա տարածքները[4]: Ապա նույն իշխանի աջակցությամբ կառուցում է եկեղեցի[5]: Տեր Դավթին հաջորդած տեր Սողոմոնը 1200 դրամով գնում է Դարաստափ (Տանձատա՞փ) գյուղը և 881 թ. նվիրում է Տաթևի Ս. Գրիգոր եկեղեցուն[6]:

Շինարարական լայն գործունեություն է ծավալում Սյունյաց Հովհաննես Ե մետրոպոլիտը (888—918): Նա տեր Սողոմոնի օրոք Տաթևի Ս. Գրիգոր եկեղեցու փակակալն էր, որին եպիսկոպոս էր օծել կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցին (877—897): Այդ շինարար հոգևորականը որոշում է գահերեց իշխան Աշոտի (Փիլիպեի որդու, Վասակի եղբոր) աջակցությամբ կառուցել կաթողիկե եկեղեցի: Այս գործում տեր Հովհաննեսին նեցուկ են կանգնում Գեղարքունիքի իշխան Գրիգոր Սուփանի ժառանգները և Բաղք գավառի (այժմյան Կապանի ենթաշրջան) գահակալ իշխան Ձագիկը՝ ապագա կաթողիկոս Վահան Սյունեցու պապը:

895 թ. սկսվում է Տաթևի մայր տաճարի՝ Պողոս-Պետրոսի կառուցումը: Այս առթիվ Հովհաննես մետրոպոլիտը եկեղեցու արևմտյան պատին փորագրել է տալիս հետևյալ հիշատակագրությունը.

«ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ԹՈՒԱԿԱՆՆ ՀԱՅՈՑ ՅԽԴ (895) ԷՐ ԵՒ ՋԱՏԻԿՆ ՆԱՒԱՍԱՐԴԻ Ի Դ (4), ԵՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ. ՈՐ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԵՑԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ ԶԿՆԻ ՏԵԱՌՆ ՍԱՂԱԻՄԱՒՆԻ, ԱՐԱՐԻ ՍԿԻԶԲՆ ՇԻՆՈՒԱԾՈՅ ԵԿԵՂԵՑՒՈՅՍ»:

Շինարարությունը տևում է 11 տարի և ավարտվում է 906 թ.: Հովհաննես եպիսկոպոսը գլխավոր տաճարի շինարարությանը զուգահեռ կառուցել տալիս դրատներ, սրբատներ, գետնափոր գաղտնարաններ, սեղանատուն, արհեստանոց-գործատներ, մթերանոց-պահեստներ[8]: Կանգնեցնել է տալիս խորհրդավոր գավազան-սյունը: Այդ ժամանակ Տաթևի վանքն ուներ 500 միաբան, ընդ որում խորաքննին փիլիսոփաներ, երաժիշտ-երգիչներ, նկարիչներ և մատենագիրներ: Սպասելի էր, որ Տաթևի եպիսկոպոսական կենտրոնը նավակատիքի ժամանակ տեր էր դառնալու բազմաթիվ կալվածների, գյուղերի ու ագարակների, հասութաբեր հաստատությունների, որոնցից ստացված եկամուտները ապահովելու էին նաև մարդասիրական կրթօջախի գոյությունը:

Տաթևի նավակատիքին առատ ընծաներով մասնակցում են Հայոց աշխարհի բոլոր մեծերը՝ աշխարհիկ և հոգևոր տերերը Սմբատ I Բագրատունի թագավորի և Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչ կաթողիկոսի գլխավորությամբ: Դա, հիրավի, հայ ժողովրդի սերտ միաբանության վառ դրսևորում էր, որը պետք է օրինակ ծառայեր հետագա սերունդների ազգանպաստ գործունեության համար:

910 թ. Հովհաննես մետրոպոլիտը գահերեց իշխան Աշոտի տիկնոջ՝ Շուշանի հետ միասին կառուցում են Վայոց ձորի խաչիկ (հնում՝ խաչերի խոռ գյուղի մոտ եղած խոտակերաց վանքը՝ Քարկոփի եկեղեցին[9]: Այս շինարար հոգևորականի ռահվիրայության ժամանակ՝ 911 թ. կառուցվում է Վահանավանքի Ս. Գրիգոր եկեղեցին, հիմնադրվում է վանական միաբանություն, որի եղբայրների թիվը անցնում էր 100-ից: Վահանավանքը աստիճանաբար դարձավ «իբրև քաղաք բազմաժողով»[10]:

---

4 Ստեփանոս Օրբելյան. Պատմություն տանն Սիսական. Մոսկվա, 1861, էջ 149—150:

5 Նույն տեղում, էջ 154—155:

6 Նույն տեղում, էջ 157:

7 Դիվան հայ վիմագրության. պրակ 2, Երևան, 1960, էջ 13:

8 Ստեփանոս Օրբելյան. Պատմություն..., էջ 163—164:

9 Նույն տեղում, էջ 171—174:

10 Նույն տեղում, էջ 174—175:

918 թ. վախճանվում է Հովհաննես մետրոպոլիտը։ Սյունյաց հոգևոր գահին բազմում է Հակոբ Ա Դվինեցին (918—958), Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի եղբորորդին, որը մեծ անհանգստություն էր պատճառելու Անանիա Մոկացի մեծ կաթողիկոսին (946—968)։ Հակոբ Ա-ի քառասնամյա առաջնորդության տարիներին Սյունյաց լեռնաշխարհը, մասնավորապես Վայոց ձորը, պատվում է կրոնամշակութային կենտրոնների լայն ցանցով։ Դեռևս 929 թ. Սմբատ գահերեց իշխանի, տիկին Սոփիայի և իշխան Սահակի հետ միասին շրջագայելով Վայոց ձորում, Հակոբ եպիսկոպոսը առաջարկում է Ոստին գյուղից վեր հիմնադրել կրոնական օջախ։ 932 թ. Փիլիպե իշխանից 12000 դրամով և մեկ պատվական գոհարով գնելով Զագեձորի (այժմյան Գորիսի ենթամարզ) Վարարակն գետի աղբրակները (Ակները), 29 կմ երկարությամբ անցկացնում է ջրատար՝ Տաթևի վանքի մերձակայքում գտնվող Ցաքուտ հանդամասը ջրարբի դարձնելու և Վարդուտի վերածելու ակնկալիքով[11]։ Դա, հիրավի, ծանր և վիթխարի աշխատանք պահանջող ձեռնարկում էր, որ կատարից Հակոբ եպիսկոպոսը աներեր կամքով ու համառությամբ։ XIII դարում, մոնղոլական արքունիքում տիրող խժդժությունների ժամանակ, ջրանցքի գործունեությունը խափանվեց և նորոգվեց միայն 1294 թ. Հայրապետ եպիսկոպոսի ու տեր Յոհաննեսի ջանքերով։ Ակների մոտ՝ լեռնալանջին պահպանվել է ջրանցքի վերանորոգման մասին հետևյալ արձանագրությունը.

«ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ԷՐ ԹՎ. ՉԽԳ (1294) ԵՍ՝ ՏՐ ՅՈՀԱՆԷՍ ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՒ ԱՂԱՒԹԻՒՔ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՒՐ ԻՄՈ ՏՐ ՀԱՅՐԱՊԵՏԱ ՏԱՐԱ ԶՋՈՒՐՍ ՎԱՐԱՐԱԿԱՆ Ի ՎԱՐԴՈՒՏՆ, ԶՈՐ ԱԾԱՊԱՏԻՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏՐ ՅԱԿՈԲ ԳՆԵԱԼ ԷՐ ԵՒ ՏԱՐԵԱԼ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԲ ԵՒ ԱՐԴԵԱՄԲՔ. ԶԽԱՓԱՆԵԱԼՆ Ի ԲԱԶՈՒՄ ԱՄԱՆԱԿԱՑ ԿՐԿԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՔ ՅԻՇԱՏԱԿ ՄԵԶ ԻՒ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ...»[12]։

931—936 թթ. Սմբատ գահերեցի և նրա իշխանուհի տիկնոջ՝ Սոփիայի աջակցությամբ կառուցվեց Գնդեվանքի սրանելի եկեղեցին։ Այս մասին ստույգ վկայություն է պահպանվել Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության էջերում, մասամբ նաև Գնդեվանքի վիմագրերում։ Տաճարի շինարարական ավանդաբերությունն ամառավում է պատկերավոր մի նախադասությամբ. «ՄԱՏԱՆԻ ԻՐ ԱՆԱԿՆ ՎԱՑՈՑ ԶՈՐ. ՇԻՆԵՑԻ ԶՍԱ ԵՒ ԵԴԻ ԱԿՆ Ի ՎԵՐԱՅ»[13]։ Շատ ավելի ուշ՝ Քրիստափոր վանահայրը 999 թ. կառուցում է Գնդեվանքի պրահը, իսկ հայր Սարգիս Բ-ն 1008 թ. Ծղուկ գավառի Զկնարած (Բաղարչայ) գետից 24 կմ երկարությամբ ջրատար է անցկացնում Գնդեվանքի և վանքապատկան գյուղերի կաք'ռները հոգալու նպատակով[14]։

Հակոբ Ա եպիսկոպոսը, դարձյալ Սմբատ գահերեց իշխանի հաճությամբ և նյութական աջակցությամբ, 936 թ. հիմնադրում է Հերմոնի վանքը՝ կառուցելով տեղի Ս. Գրիգոր եկեղեցին։ Նշենք, որ այս վանքի ստույգ տեղադրությունը մինչև դարիս 50-ական թթ. որոշակի չէր և բացահայտվեց մեծ մագրագետ-պատմաբան Ս. Գ. Բարխուդարյանի վեծանությունների շնորհիվ։ Հերմոնի վանականները վգալի դեր խաղացին հայոց հայրապետական աթոռը 1441 թ. մայր հայրենիքում վերահաստատելու ժամանակ։

Ստեփանոս Օրբելյանի խոսքերը Հակոբ Ա եպիսկոպոսի վերաբերյալ երկակի է. կոչելով նրան «Սիւնեաց մետրապօլիտ և գլուխ ամենայն եպիսկոպոսաց Հայոց»[15], նա չի վարանում Հակոբ Ա-ին ներկայացնել շռայլ գովեստներով.«Անհամեմատելի, աստվածավայելուչ, արքայաշուք, երջանիկ և բարի»,

11 Նույն տեղում, էջ 185։

12 Դիվան հայ վիմագրության, պրակ 2, էջ ռծ։

13 Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Պատմութիւն..., էջ 191։

14 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 9։

15 Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Պատմութիւն..., էջ 207։

«հանճարեղ և իմաստուն»[16]։ Սակայն չի մոռանում հիշատակել Հակոբի նաև «վայրենարարո գործերի մասին»[17], այսինքն՝ թե ինչպես այս եպիսկոպոսը ապստամբեց հայոց կաթողիկոսի դեմ և հրաժարվեց մեռոնը ստանալ հայրապետական աթոռից՝ միանալով Աղվանքի արքեպիսկոպոսին։ Սա է գլխավոր պատճառը, որ նույն պատմիչը այս դեպքում Հակոբ Ա-ին անվանում է «ամբարտավան, ստախոս և դառոզ»[18]։ Իհարկե, նշանակություն ուներ նաև այն պարագան, որ Հակոբ Ա-ն, միանալով հանճարեղ Գրիգոր Նարեկացու հոր՝ Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսի հետ, ցանկանում էր բարենորոգումներ կատարել հայոց եկեղեցու հիերարխիկ կառուցվածքում։ Սակայն, ինչպես Ստեփանոս Օրբելյանն է ասում, «թողցուք զայս քննել Արդարադատին Աստուծոյ»[19], չէ՞ որ «զոյ քուն և իմաստնոյ»[20]։ Անանիա Մոկացի կաթողիկոսը, ժամանելով Սյունիք, խստորեն դատապարտում է Հակոբ Ա-ին, զրկելով Սյունյաց աթոռը մետրոպոլիտական աստիճանից։

Հակոբ Ապստամբից (նաև՝ Հերձվածողից) հետո նահանգի թեմական եպիսկոպոս ընտրվեց Բաղք գավառի գահակալ իշխան Ջևանշերի որդի Վահանը, որն այդ ժամանակ Վահանավանքի առաջնորդն էր («որ էր առաջնորդ մեծի ուխտին Վահանու վանից»)[21]։

Նույն Վահանավանքում նրան եպիսկոպոս է ձեռնադրում Անանիա Մոկացի կաթողիկոսը[22]։ Վահան Ջևանշերյանի նստավայրերը Տաթևն ու Վահանավանքն էին։ Վերջինումս նա կատարեց մեծ բարեփոխումներ. կառուցեց Ս. Գրիգորի կամարակապ գավիթը, սրահ-դամբարանատունը, սեղանատունը, փողրակներով խմելու ջուր բերեց Տիգրանասարի լանջերից[23]։ 967 թ. Վահան եպիսկոպոսը շինարարական աշխատանքներ է կատարում Արատեսի վանքում, որի կենտրոնական զույգ մատուռների արևմտյան պատին պահպանվել է հիշատակագրություն.

«ՆԺՁ (967) ԹՎՈՒԻՆ ԵՍ ՎԱՀԱՆԻԿ[24] ՅԻՄՈՑ ԸՆՁԻՑ ԿԱՆԳՆԵՑԻ ՁՍՈՒՐԲ ԳԻՈՐԳ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈ ԻՄՈ. ՈՐ ԿԱՐԴԱ ՁԻՍ ՅԻՇԵՍՑԷ ԵՒ ԱՍ ՁՆԱ ՅԻՇԷ»[25]։

Անանիա Մոկացուց հետո Շիրակավանում կայացած եկեղեցական ժողովը հայրապետական աթոռին է բաղմեցնում Վահան Սյունեցուն, սակայն որոշ ժամանակ անց, Վահանը նույնպես մեղադրվում է քաղկեդոնականության հարելու մեջ և գահընկեց է արվում։

Տեր Վահանի շինարարական գործունեությունը հատկապես նկատելի է Սյունյաց եպիսկոպոս եղած ժամանակ։

Շինարարական աշխատանքները Սյունիքում յայն ծավալով շարունակվեցին նաև Հովհաննես Է եպիսկոպոսի առաջնորդության տարիներին (1006—1058)։ Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի կոնդակի համաձայն նա ընդարձակում է Սյունյաց թեմի սահմանները (հիշենք Սարգիս Ա կաթողիկոսի շրջաբերական նամակը)[26], վերստանում է մետրոպոլիտական շնորհը, վերադարձնում է հափշտակված գյուղերն ու կալվածները, ապա նվիրվում է շինարարական աշխատանքների։

1027 թ. Հովհաննես եպիսկոպոսը դարձյալ վերականգնում է Ս. Գրիգոր

---

16 Նույն տեղում, էջ 184։

17 Նույն տեղում, էջ 201։

18 Նույն տեղում, էջ 201, 207։

19 Նույն տեղում, էջ 202։

20 Նույն տեղում, էջ 201։

21 Նույն տեղում, էջ 208։

22 Նույն տեղում, էջ 210։

23 Նույն տեղում, էջ 175։

24 Փաղաքշական մասնիկով անձնանունները տարածված են եղել Սյունիքում. վիմագրերում և մատենագրական աղբյուրներում ունենք Աշոտիկ, Սմպատիկ. Գրիգորիկ, Վահանիկ և այլն։

25 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 122։

26 Ստեփանոս Օրբելյան. Պատմութիւն..., էջ 226—228։

եկեղեցին։ Նրա բարենորոգումներին նեցուկ են կանգնում Սյունյաց Վասակ թագավորը (998—1040) և նրա քեռորդիներ Սմբատն ու Գրիգորը, որոնք հաջորդաբար բազմելու էին Սյունիքի արքունական դահին։

1043 թ. Սմբատ II թագավորի (1040—1051) աջակցությամբ կառուցվում են Տաթևի մայր տաճարի սրահը, գավիթն ու այլ շինություններ։ Այս առթիվ տեր Հովհաննեսը Տաթևի սրահի հյուսիս-արևմտյան մույթի վրա արձանագրում է.

«ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ԷՐ Թ[ՎԱԿԱՆՆ] ՆՂԲ (1043), Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍՄԲԱՏԱ, ՈՐԴՈ ԱՇՈՏՈ, ԵՍ ՏՐ ՅՈՎՀԱՆԷՍ ՇԻՆԵՑԻ ՋՍՐԱՀՍ ԱՒԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՄԲԱՏԱ...»[27]։

Հովհաննես Է-ն վախճանվեց 1058 թ., Սյունյաց առաջնորդ ընտրվեց Գրիգոր եպիսկոպոսը (1058—1116), որը վայելում էր Գրիգոր I Սյունյաց թագավորի (1051—1072) բարոյական և նյութական աջակցությունը։ «Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԱՊԱՇՏԻ ԱՐՔԱՅԻՆ ԳՐԻԳՈՐՈ» 1062 թ. վերանորոգվում է Բղենո Նորավանքը[28], ինչպես նաև Խոտակերաց վանքի (Քարկոփի) եկեղեցին։ Գրիգոր եպիսկոպոսը 1087 թ. կառուցում է Տաթևի վանքի Ս. Աստվածածին կրկնահարկ եկեղեցին։ Այդ ժամանակ Սյունիքի թագավորն էր բարեպաշտ հայկազուն Սենեքերիմը, որը նենգաբար սպանվեց սելջուկթուրքերի հետ բանակցելու ժամանակ Բաղաբերդի պարիսպների տակ 1094 (6) թ.։

Սյունիքի շինարար եպիսկոպոսների ցանկում ուրույն տեղ է գրավում Սարգիս Ա արքեպիսկոպոսը, որը Լիպարիտ Օրբելյանի աջակցությամբ 1216—1221 (23) թթ. ընթացքում կառուցեց Ամաղուի Նորավանքի Ս. Նախավկա եկեղեցին։ Ս. Նախավկայի արևմտյան մուտքի ճակատակալ քարին պահպանվել է հիշատակագրություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԵՍ ՏՐ ՍԱՐԳԻՍ, ՔԵՌՈՐԴԻ ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ՇԻՆԻՑԻ ՋԵԿԵՂԵՑԻՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ ԻՆՋ ԵՒ ԼԻՊԱՐՏԻՆ ԵՒ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԵՐԿՈՒ ՀԱՐԱԶԱՏ ԵՂԲԱՐՑՆ, ՈՐ ՍՊԱՆԱՆ Ի ԹՈՒՐՔԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱՑ...»[29]։

Սարգիս Ա-ն Վայոց ձորի արձանագրություններում կոչված է «Նորավանքի առաջնորդ» և «Սիւնեաց վերադիտող»[30]։

Ս. Նախավկայի մի շարք արձանագրություններ վկայում են, որ առանձին համատացյալներ կարող էին հոգալ կառույցի այս կամ այն հատվածի ծախսերը։ Օրինակ՝ Սարգիս Ա-ն նշում է, որ Ս. Նախավկայի հարավ-արևմտյան խորանը կառուցվել է Հասան Ամաղուեցու միջոցներով[31], իսկ հարավ-արևելյանը՝ այս եպիսկոպոսի «ձեռայսուն աշակերտ», եկեղեցու փականակալ Խիկարի՝ «զի Նորայ արդեամբք շինեցաւ»,—կարդում ենք վկայագրում[32]։ «Ի հայրապետութեան ՏՐ Սարգսի» 1220 թ. Արատեսի վանքում փորագրվել է անվանի զորապետ Վասակ Խաղբակյանի հաղթական բովանդակությամբ արձանագրությունը, որում պատմվում է Վայոց ձորի ամրոցները սելջուկ-թուրքերից ազատագրելու մասին[33]։

Սյունյաց նահանգը, մասնավորապես Վայոց ձոր գավառը, նաև աշխարհիկ կառույցներով շենացնելու ասպարեզում դգալի դեր կատարեց Սարգիս Բ եպիսկոպոսը (1263—1298), որը դրավոր աղբյուրներում ներկայացված

27 Դիվան հայ վիմագրության, պրակ 2, էջ 19։
28 Նույն տեղում, էջ 45։
29 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 212։
30 Նույն տեղում, էջ 211։
31 Նույն տեղում, էջ 212։
32 Նույն տեղում, էջ 213։
33 Նույն տեղում, էջ 123։

է «անյաղթ հռետոր»[34], «քահանայապետ գաւառիս»[35] և այլ շոյող մակդիրներով։

Հավատացյալներից ստացած առատ ընծաները՝ շարժական և անշարժ գույքը[36], նա ամբողջապես տրամադրում է կրոնական և աշխարհիկ շինությունների բարեկարգմանը. կառուցել է տալիս Ամաղուի Նորավանքի և Որոտնավանքի (Վաղադնի վանքի) հյուրատները, կամուրջները, որոնցից առավել նշելին Արփա (Արենի) գյուղի կամուրջն է, որի խելերը պահպանվել են առ այսօր։

Սյունյաց նահանգի թեմակալ առաջնորդների ցանկում առանձնակի տեղ է գրավեցնում մեծանուն պատմագիր, բանաստեղծ, կրոնական և քաղաքական գործիչ, Գլաձորի համալսարանի սան Ստեփանոս Օրբելյանը։ Կիլիկիայում հայոց կաթողիկոսից ձեռնադրվելով եպիսկոպոս և արժանանալով մետրոպոլիտական աստիճանի, այս իշխանազունը վերականգնում է Սյունյաց երկփեղկված աթոռը (Տաթևի և Նորավանքի հակադիր թեմերը) մեկ գավառում, մեկ հոգևոր հովիվ նշանաբանով, առանց խտրություն դնելու նրանց միջև։ Նա առանձնակի ուշադրություն է դարձնում նահանգի հոգևոր-կրթական օջախների գործունեությանը, նրանց համար հայթայթելով նյութական միջոցներ[37] և ապահովելով բարեխնամ հոգատարություն։

Ստեփանոս Օրբելյանի անունը քանիցս հիշատակվում է Սյունյաց նահանգի, մասնավորապես Վայոց ձորի բազմաթիվ վիմագրերում՝ Արատեսի վանքում[38], Հերմոնի վանքում[39], Քարագլխում («Հին Սալլի» գյուղում)[40], Հերհեր գյուղում (Շաշ Միակեցի արձանագրության մեջ)[41] և այլուր։ Ստեփանոս Օրբելյանի շինարարական գործունեության գլուխ գործոցը հանդիսանում է Տաթևի՝ այժմ վերականգնված Ս. Գրիգոր եկեղեցին։ Իր «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության մեջ պատմիչը ներկայացնում է այս եկեղեցու վերականգնման երեք փուլերը. առաջին անգամ Ս. Գրիգորը վերանորոգվել է կառուցողներ Փիլիպե իշխանի և Դավիթ Բ եպիսկոպոսի ջանքերով, ապա՝ վերականգնվել է Հովհաննես եպիսկոպոսի (Է) և Սյունյաց Սմբատ II թագավորի միջոցներով։ Իսկ 3-րդ անգամ հիմնովին վերականգնում է ինքը՝ մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը[42]։

1295 թ. ավարտելով Ս. Գրիգոր եկեղեցու վերականգնումը, Ստեփանոս Օրբելյանը ցանկություն է հայտնում արևմտյան մուտքի ճակատակալ քարին արձանագրել.

«Ի ԹՎ. ՉԽԴ (1295). ԶՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԵՏՐԱՊԱՒԼԻՏ ՍԻՒՆԵԱՑ, ՈՐ Է ՊՐԱԻՏԱՑՐԱՆՏԷՍ ՀԱՅՑՅՈՑ ՄԵԾԱՑ, ՈՐԴԻ ՄԵԾԱՓԱՌ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱՒՃԻՆ, ՇԻՆՈՂ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ»[43]։

Տաճարի վերին կամարաղեղին, ներքուստ, փորագրել է տալիս վանքի տեղադրությանը համապատասխան սքանչելի մի նախադասություն.

«ԳՆԱՑՔ ԳԵՏՈՑ ՈՒՐԱԽ ԱՌՆԵՆ ԶՔԱՂԱՔՍ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՍՈՒՐԲ ԱՐԱՐ ԶՅԱՐԿՍ ԻՒՐ ԲԱՐՁՐԵԱԼՆ»[44]։

Ստեփանոս Օրբելյանը վախճանվեց 1303 թ. և ամփոփվեց Ամաղուի Նորավանքի Օրբելյան իշխանազունների տոհմական դամբարանատանը։ Կյանքի մայրամուտից առաջ նույնպես նա չդադարեցրեց անհաշտ պայքարը հու-

---

34 Նույն տեղում, էջ 231։

35 Նույն տեղում, էջ 223—224։

36 Նույն տեղում,

37 Նույն տեղում, էջ 220, 222։

38 Նույն տեղում, էջ 126։

39 Նույն տեղում, էջ 134։

40 Նույն տեղում, էջ 172։

41 Նույն տեղում, էջ 68—69։

42 Ստեփանոս Օրբելյան. Պատմութիւն..., էջ 353։

43 Դիվան հայ վիմագրության. պրակ 2, էջ 25։

44 Նույն տեղում։

մեական եկեղեցու հետևորդների դեմ և Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի շրջաբերական թղթին տվեց մերժողական պատասխան՝ արևելյան եպիսկոպոսների և մի շարք իշխանների անունից ավելացնելով. «Հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել և ոչ ընդ Հռոոմոց յերկինս ելանել»[45]։

Թերևս ունիթոռ-միաբարների դեմ Ստեփանոս Օրբելյանի մղած անհաշտ պայքարն էր հիմնական պատճառը, որ խոշորագույն պատմաբան Մ. Չամչյանը նրան կոչում է «այր խրոխտ» «ինքնահաճ» «մեծամիտ» «կոչէ զինքն մետրոպօլիտ պրոտոֆրոնդէս» «պղտորէ զմիտս բազմաց ի վերայ քաղկեդոնականաց» «զի ճարպիկ ոմն էր և ճարտար ի խօսս»[46]. Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին 1302 թ. հղած պատասխան-նամակը Մ. Չամչյանը համարում է «աղճատանք ստայօդ բանից և սնոտի զրոյցք տգիտական ճառից»[47]։

Կարծում ենք, չափազանց խիստ է ասված Մեծն Ստեփանոսի[48] հասցեին։ Գոնե մեզ համար նման որակումները բացարձակապես ընդունելի չեն։

Դեռևս Ստեփանոս Օրբելյանի օրոք, 1302 թ. Սյունյաց մետրոպոլիտական գահին բազմեց Օրբելյան իշխանազուն Հովհաննես Օրբելը (1303—1324), որին նույնպես վերագրում ենք շինարար պատվանունը։ Նա ևս շարունակեց անհանդուրժողական կեցվածք ընդունել հռոմեական եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ, պաշտպանելով հայ առաքելական եկեղեցու դարավոր ավանդույթներն ու անկախ կարգավիճակը։

Հովհաննես Օրբելը ժամանակակիցների կողմից կոչվել է «արհիական քաւշապետ»[49], «Հռչակաւոր մետրոպոլիտ», «տուն իմաստից և հանճարոյ»[50]։ Նա առավել սերտացրեց և ամրապնդեց Պռոշյան և Օրբելյան իշխանական ընտանիքների միասնությունը, ուստի պատահական չէ, որ Էաչի Պռոշյանը՝ «թոռն Պռոշոյ», Հովհաննես Օրբելին կոչում է «մեր եղբայր»[51]։

Հովհաննես Օրբելի շինարարական գործունեության մեջ նշելի է հատկապես Արփայի (Արենիի) Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը 1321 թ. հանճարեղ Մոմիկի ձեռքով։ Ներքուստ պատկերաքանդակներով հարուստ այս գողտրիկ տաճարը կառուցված է հիշյալ գյուղում, տիրապետող դիրք ունեցող մի բլրակի վրա՝ ի տես ամենի։

Ս. Աստվածածնի արևմտյան մուտքի վերին կամարի շուրջ Մոմիկի ձեռքով փորագրված է.

«ԵՍ՝ ՏՐ ՅՈՎ[Ա]ՆԷՍ ԱԻՐՊԷԼ ՍԻՒՆԵ[Ա]Ց ԱՐՀԷՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՆՈՂ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅԻՇԵԼ ԱՂԱՉԵՄ, ԵՒՍ [Ե]Ի ԶԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆՆ ԶԱՐԵԱՆ ՄԵՐՁԱՒՈՐՆ ԻՄ ԶՔԱՋ ՄԵՆԱՄԱՐՏԻԿՆ ԶԲՈՒՐԹԷԼՆ ԵՒ ԶԴԺԽՈԱՓԱՌ ՔՍԱՍԷՐ ԶՈՅԳՆ ԻՒՐ ԶՎԱԽԱԽՆ ՆՈՐԱԲՈՂԽԲՈՋ ԶԱԻԱԿԱՒՔՆ ԻՒՐԵԱՆՑ ԲԷՇՔԷՆԻՒՆ ԵՒ ԻՒԱՆԷԻՒՆ. ԹՎ. ։ՉՀ։ (1321)։
ՇԱՐԺ ԵՂԵՒ. ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊ(ԵՏ)»[52]։

Հայաստանի երկրաշարժերի պատմությունից գիտենք, որ 1319 թ. Սյունյաց լեռնաշխարհում տեղի է ունեցել ավերիչ երկրաշարժ։ Կարծում ենք, 1321-ը եկեղեցու վերականգնման տարին է։ Նույն 1321 թ., ամենայն հավանականությամբ դարձյալ Մոմիկի մտահղացմամբ, կառուցվել է Վայոց ձորի Սպիտակավոր Աստվածածնի վանքը, որի նրբահյուս մանրաքանդակներն ու դիմաքանդակները մատնում են հանճարեղ ճարտարապետի ներկայությունը։ Ի դեպ, Սպիտակավոր Աստվածածինը, որ սկզբնաղբյուրներում կոչվել է նաև Սրկղունյաց կամ Բոլորաբերդի անապատ, հարատևեց մինչև

45 Ստեփանոս Օրբելյան. Պատմություն.... էջ 337։

46 Միքայել Չամչյան. Հայոց պատմություն. Գ, Երևան, 1984, էջ 284։

47 Նույն տեղում, էջ 191։

48 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 233։

49 Նույն տեղում, էջ 60։

50 Նույն տեղում, էջ 232, 233։

51 Նույն տեղում, էջ 143, 150։

52 Նույն տեղում, էջ 29։

XV դարը ներառյալ, մինչև «պարոն-տէր» Եղիշե արքեպիսկոպոս Օրբելյան-Բուրթելյանի գահակալությունը շարունակաբար։

Սյունյաց եպիսկոպոսական աթոռը Հովհաննես Օրբելից հետո ժառանգեց Ստեփանոս-Տարսայիճը (1324—1331)։ Նա Սյունիքի իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելյանի թոռն էր, պատմիչ Ստեփանոս Օրբելյանի անհամեմայր եղբայր Ջալալի և Գոնցա իշխանուհու որդին. ուսանել էր Գլաձորի համալսարանում, աշակերտելով Եսայի Նչեցուն և Սարգիս վարդապետին։ Երիտասարդ հասակից ընտրվել է «արհեպիսկոպոս տանն Սիսական»[53] և «պետ երկոտասան գաւառաց Սիւնեաց»[54]։

Ստեփանոս-Տարսայիճի շինարարական գործունեության մեջ առանձին տեղ է զբաղեցնում հայ միջնադարյան ճարտարապետության ինքնատիպ նուշներից մեկը՝ Եղեգիս իշխանանիստ գյուղաքաղաքի «Զորաց տաճարը», որի ընդարձակ հրապարակում տեղի էին ունենում զորահանդեսներ և հայոց զորքի երգմնակալության արարողությունները։ «Զորաց տաճարն» իր հորինվածքային առանձնահատկություններով հիշեցնում է Բղենո Նորավանքը։

«Զորաց տաճարի» արևելյան պատի հյուսիսային խորշին առ այսօր պահպանվել է 1322-ով թվագրվող հետևյալ արձանագրությունը.

«ԵՍ ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍ, ՈՐԴԻ ՋԱԼԱԼԻՆ, ԹՈՌՆ ՄԵԾԻ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ, ՀԻՄՆԱՐԿԵ(Ա)Լ ՇԻՆԵՑԻ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ...»[55]։

Ուղիղ 10 տարի հետո՝ 1332 թ. Լիպարիտ իշխանի որդի Զեսար Օրբելյանի հովանավորությամբ կառուցվեց Սելիմի (Սուլեմա) նշանավոր կարավանատունը, ուր դադար էին առնում Դեղարքունիք և Վայոց ձոր ճանապարհահատվածն անցնող երթևեկները։ Ուշագրավն այն է, որ այս քաղաքացիական կառույցը հիմնադրվել և ավարտին է հասցվել Գլաձորի համալսարանի բարունապետ Եսայի Նչեցու օրհնությամբ և «աղաւթիւք», ինչպես վկայում են կառույցի հայերեն և արաբատառ պարսկերեն արձանագրությունները[56]։

Քննարկվող ժամանակաշրջանում հանդես եկան հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցի այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Սիրանեսը, Սոմիկը, Գրիգորիկը, Շնորհավոր Աղբարը, Բուտը, Սմբատ Պատանին և այլ շինարար վարպետներ[57], որոնց անունների ցանկը շարունակաբար համալրվում է նորանոր հայտնագործումներով։

Պատմությունը նորից և նորից ուսուցանում է, որ Հայոց աշխարհը ծաղկում և վերելք է ապրել միմիայն այն ժամանակ, երբ տակա են եղել հոգևոր և աշխարհիկ տերերի միասնությունն ու համագործակցությունը և ամենակարևորը՝ ժողովրդին ծառայելու աներեր կամքն ու ազնիվ ցանկությունը[58]։

Սյունիքում շինարարական գործընթացներն ընդհատվեցին XV—XVI դարերում քաղաքական ծանր պայմանների պատճառով (լենկթեմուրյան ավերածությունները, Կարա-կոյունլու և Ակ-կոյունլու թուրքմենական ցեղախմբերի արյունահեղ բախումները Հայաստանի տարածքում և այլն). վերելք նկատվեց XVII դարում։

Եզրափակելով նշենք, որ Սյունիքի իշխաններն ու հոգևորականները քաջ գիտակցում էին, որ «...ամենայն փառք եւ մեծութիւն սպառելոց են եւ վա-

---

53 Նույն տեղում, պրակ 2, էջ 101։

54 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 231։

55 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 108,

56 Նույն տեղում, էջ 177—178։

57 Ս. Բարխուդարյան. Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ. Երևան, 1963, էջ 60, 62—74, 78—86, 89—92, 101—103 և այլն։

58 Գր. Մ. Գրիգորյան. Սյունիքը Օրբելյանների օրոք. Երևան, 1981։ Տե՛ս նաև՝ Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 177։

ղիւ կորնչելոց»[59], ուստի ընկալելով «զունայնութիւն վայրկենի կենայս...» գտնում էին, որ երկիրը կարելի է շենացնել միմիայն այն դեպքում, «երբ բանքն սպառին եւ գործքն թագաւորեն»[61]։ Որքան արդիական են հնչում խորիմաստ այս բառերը։

СТРОИТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ЕПИСКОПОВ СЮНИКА (IX—XIV вв.)

Доктор истор. наук ГРИГОР ГРИГОРЯН

Резюме

Письменные источники, в частности, лапидарные надписи Сюникского нагорья свидетельствуют, что экономический рост и культурный подъем страны были обусловлены, в первую очередь, наличием государственной власти, мудростью патриотически настроенных духовных предводителей и светских феодалов Армении. Сюникский episкопат и местные князья в память о себе оставили поколениям великолепные храмы и другие гражданские строения, о которых сохранились достоверные сведения в трудах средневековых авторов-очевидцев

59 Դիվան հայ վիմագրության, պրակ 4, Երևան, 1973, էջ 121—132։
60 Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 215—216։
61 Նույն տեղում, էջ 216։